Ղուբան ունի լաւ տանձ ու խնձոր, որ տեղական հայերն ու պարսիկներն իրենց ծնողաց յիշատակի համար պատուաստում են վայրի նոյնպիսի ծառերի վրայ, որ անտառի մէջն են, ըստ որում Ղուբան շրջապատած է անտառովք, ուստի և բնակիչքն անտառաբնակ, ինչպէս աւազակաց խումբերն վկայեցին 1889 թուին յորոց ազատեց մեզ Աստուած հրաշքով («Արդարըն փրձանի յուսողաց իւրոց»)։

Ղուբայում մի նշանաւոր շէնք չկայ, իսկ հայոց եկեղեցին յանուն սուրբ Աստուածածնայ շինուած է 1845 թուին Տփխիսեցի պարոն Ստեփաննոս Լազարեանցէն՝ Ղուբայում արքունական գործով բնակւած բարեպաշտ իշխանից, ինչպէս արձանագրութիւնը ցոյց է տալիս, որ ըստ այսմ.

«Յանուն Օգոստափառ Կայսրութեան Նիկողայոսի առաջնոյ կառուցաւ եկեղեցիս Ամենասուրբ Աստուածածնի սեպհական արդեամբ եւ ծախիւք հարազատ եղբարց Գուբերնսկի Սեկրետարի Ստեփաննոսի եւ առաջին կարգի վաճառականի Յովհաննիսի Անդրէասեան Լազրովեանցի, ի 1845 ամի ի 15 օգոստ.» :

Յիշեալ պարոն Ստեփաննոսն Լազարեանց տորոնի առետըրի յաջող ժամանակը՝ ուրիշ ծառայութիւնքը թողնելով, պարապել է վաճառականութեամբ, և այնպէս օժանդակելով տեղական հայոց՝ պատճառ է եղել Ղուբայի հայոց բազմանալուն, որոց համար իսկ շինել է եկեղեցին։

Եկեղեցին շինուած է փոքր դրութեամբ և բարձր կաթուղիկէիւ, այնպէս որ այժմ ժողովրդեանը չէ բաւականացնում, ինչպէս 1889 թուի սեպտ. տեսի և իմացայ։

Եկեղեցին չունէր եկեղեցական դպրոցի շէնք, թէ և ընդարձակ տեղ կար եկեղեցւոյ պարսպում։ Դպրոցը զետեղուած էր եկեղեցուց հեռի մի հին շինուածքում, որը պատկանում էր Բագուաբնակ մեծապատիւ եղբարց Կրասիլնիկեանց, ոյք և ազգասիրաբար բարեհաճել են շնորհել այն շինուածքը Ղուբայու եկեղեցւոյն դպրոցի կատարելութեան համար։